Կարապետ Հակոբյան

ԵՊՀ Հայոց պատմության ամբիոնի հայցորդ

ՀՅԴ ԿԱՐՍԻ «ՁՐԱԲԵՐԴ» ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1904-1912 ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

1902-1904 թթ. ՀՅԴ գործունեությունը Կարսի մարզում հասնում է իր բարձրակետին, երբ Կարսը վերածվում է յուրատեսակ խարիսխի, որտեղից արևմտահայերին օգնելու նպատակով երկիր են անցնում մի շարք խմբեր: Միաժամանակ այստեղ են հաստատվում ՀՅԴ-ի մի շարք գործիչներ, որոնք նպաստում են Կարսի մարզում հեղափոխական ուժեղ կազմակերպության ստեղծմանը: Այս գործիչներից ոմանց զոհվելուց, իսկ ոմանց երկիր անցնելուց հետո Կարսի մարզի հեղափոխական կառույցները թուլանում են: Ո՞րոնք էին դրա պատճառները:

1904 թ. օգոստոսի 15-18-ը կայանում է ՀՅԴ Կարսի շրջանային ժողովը, որն, ի թիվս այլ հարցերի, պետք է ընտրեր նոր կենտրոնական կոմիտե: Այս անգամ ընտրությունը չկայացավ ավանդական պայմանների կիրառմամբ՝ ճանաչված և գործունյա գործիչների քչության պատճառով: Ժողովի առաջին նիստին, որում նախագահում էր ՀՅԴ Քարի (Ալեքսանդրապոլ) կենտրոնական կոմիտեի ներկայացուցիչ Հայ Գուսանը (Ավետիք Իսահակյան), կենտրանական կոմիտեի անդամության առաջադրված 20 թեկնածուներից 13-ը չէին համապատասխանում Կարսի մարզի նախկինում կիրառված չափանիշներին[1]: Հաջորդ նիստին նույն մասնակիցների համաձայնությամբ «մի քիչ մեղմ վերաբերուելով նախկին ժողովի թեկնածուներից ոմանց»՝ ընտրությունը կայանում է[2]: Կենտրոնական կոմիտեի նոր անդամների անունները, համաձայն գործող կարգի, մնում էին գաղտնի: Չնայած դրան, ընտրությունը իրեն չի արդարացնում: Կարսի մարզում հեղափոխական գործը հետընթաց է ապրում:

Շրջանային ժողովը քննարկում է նաև այլ հարցեր և կայացնում հետևյալ որոշումները՝ 1. ընտրել 5 հոգուց բաղկացած հանձնաժողով, որը պետք է զբաղվի ներկուսակցական տարաձայնությունների վերացմամբ, 2. գյուղական երիտասարդությունից կազմել զինվորական ուժ, որը կիրականացնի ՀՅԴ Կարսի կենտրոնական կոմիտեի որոշումները, 3. մարզում շարունակել կիրառել Հ. Յ.

[1] ՀՅԴ կենտրանական կոմիտեի անդամների ընտրությունները տեղի էին ունենում համաձայն ՀՅԴ կանոնակարգի, բայց ըստ տեղական սովորության հաշվի էին առնվում նաև թեկնածուի տոհմը, ընտանեկան և ներքին կյանքը, նրա կուսակցական ու անձնական հատկությունները (տե՛ս Ռուբէն, Հայ յեղափոխականի մը յիշատակները, Ա. հատ., Երեւան, 1990, էջ 136):

[2] Տե՛ս Նիւթեր Հ. Յ. Դաշնակցութեան պատմութեան համար (այսուհետև՝ Նիւթեր…), հատ. Ե., խմբ. Եր. Փամպուքեանի, Պէյրութ, 2007, էջ 127:

Դաշնակցության դատավարական գործունեությունը, 4. ՀՅԴ Արևելյան բյուրոյից խնդրել «աւելի մեծ թուով ինտիլիգենտ շրջիկներ ուղարկելու Զրաբերդ՝ տեղական յեղափոխական պահանջներին ավելի լայն չափով բաւականութիւն տալու համար»[1]: Կայացված որոշումները ցույց էին տալիս, որ Կարսի մարզում առկա էին մի շարք խնդիրներ, այդ թվում՝ շրջիկ-գործիչների պակաս և տարբեր հարցերի վերաբերյալ ներկուսակցական տարաձայնություններ: Դրանք գնալով ավելի խորացան ու բացասական ազդեցություն ունեցան Կարսի մարզի ՀՅԴ մարմինների վրա:

1904 թ. դեկտեմբերի 10-ին Թիֆլիսում բացվում է ՀՅԴ Արևելյան մարմինների IV շրջանային ժողովը: Ժողովում ՀՅԴ Կարսի կենտրոնական կոմիտեի տված հաշվետվության համաձայն 1904 թ. դեկտեմբերի դրությամբ Կարսի շրջանում կար զենքի ու զինամթերքի հետևյալ քանակությունը՝ 112 հատ «մոսին», 49 հատ «բերդանկա» հրացան, 30.000 հատ «բերդանկա» և 15.000 հատ «մոսին» տեսակի հրացանների փամփուշտ: Անդրադառնալով մարզի ՀՅԴ հեղափոխական կազմակերպությանը՝ Կարսի ներկայացուցիչը նշում էր, որ Կարսի շրջանն ուներ կենտրոնական կոմիտե, ղեկավար մարմին և 121 դաշնակցական խումբ՝ յուրաքանչյուրում 15 հոգի, վաճառականների 13 խումբ, Կարմիր խաչի կոմիտե՝ բաղկացած 13 խմբից, 28 դպրոց, դատաստանական մարմին, իսկ շրջանային 4 կոմիտեներում ընդհանուր առմամբ կային 76 զինվորական խումբ և կարմիր խաչի խմբեր[2]:

Այնուհանդերձ, հետագա ամիսների ընթացքում ՀՅԴ Կարսի կառույցը հետընթաց է ապրում: «Զրաբերդ» կենտրոնական կոմիտեի 1906 թ. տեղեկագրում կարդում ենք. «1905 թ. վերջերից սկսած ոչ մի ուժեղ, գիտակից ու գործին նուիրուած կազմ չէ եղել, որ կարողանար իւր հեղինակութեան կնիքը դներ շրջանի վրայ եւ ամէնքիս համար ցանկալի վերածնութիւն առաջացնէր»[3]: Նույն տեղեկագրում նաև ասված էր, որ վերջին 2 տարվա ընթացքում ոչ մի կանոնավոր շրջանային ժողով չի գումարվել, որը համապատասխան կ'լիներ ՀՅԴ ծրագրին և ներքին կազմակերպական կանոններին: Բացի այդ չեն եղել նաև «օրինաւոր ընտրուած կէդրոնական կոմիտէի կազմեր, այլ եղել են նշանակովի, ժամանակաւոր կոմիտէներ», որոնք չէին վայելում «հարկաւոր եղած վարկն ու հեղինակութիւնը», որի հետևանքով հեղափոխական գործն «աւելի ու աւելի էր թուլանում եւ ընկնում»[4]:

Կարսի մարզում հեղափոխական գործի անկումը հետևանք էր ոչ միայն ՀՅԴ Կարսի կենտրոնական կոմիտեի թուլության, այլև 1904-1906 թթ. մարզում լայն ծավալ ստացած

[1] Նույն տեղում, էջ 130:
[2] Նույն տեղում, Բ. հատ., բ. տպագր., խմբ. Հր. Տասնապետեանի, Պէյրութ, 1985, էջ 206:
[3] Նույն տեղում, Ե. հատ., էջ 143:
[4] Նույն տեղում:

այնպիսի դեպքերի ու երևույթների, ինչպիսիք էին՝ 1. ՀՅԴ-ի քարոզչության թուլությունը, ինչը պայմանավորված էր Կարսի շրջանի հեղինակավոր գործիչների զոհվելով (Թորգոմ, Մենակ, Իսաջան) կամ Երկիր անցնելով (Արամ, Իշխան, Ռուբեն), 2. 1904-1906 թթ. ընթացքում «դաշնակցական ոգուն հակառակ եւ անվստահելի» մարդկանց ՀՅԴ շարքերը ներգրավելը, 3. Կուսակցական կարգապահության և գաղտնապահության վերացումը, 4. ՀՅԴ-ի կոմիտեների և ենթակոմիտեների՝ դատաստանական գործերում ներգրավվելու հետևանքով բուն հեղափոխական գործի անտեսումը, 5. ՀՅԴ-ի կոմիտեների հաշվետվության հանդեպ վստահության բացակայությունը, 6. Հայ գաղթականների շրջանում խաչագողերի, արկածախնդիրների և ավազակախմբերի թվի մեծացումն ու նրանց կողմից տեղական բնակչության հանդեպ բռնություններ և հարստահարություններ գործադրելը, 7. Կովկասյան գործունեության նախագծի ընդունումն ու Կարսի մարզում այն չիրականացնելը, 8. Կարսի ՀՅԴ-ի կոմիտեներից ձեռնհաս անձանց հեռանալը, 9. Հարևան կենտրոնական կոմիտեների հետ անմիջական հարաբերությունների բացակայությունը, ինչի հետևանքով «մի շրջանից իւր անկարգութեան եւ զեղծումների պատճառով աքսորված անձնաւորութիւնը, հիւրընկալւում եւ պաշտօն էր գտնում մի ուրիշ շրջանում՝ այդպիսով պատժի փոխարեն պատւի արժանանալով»[1], 10. ՀՅԴ շարքերում արկածախնդիր զինվորների ներգրավումը, որոնք «տեղն եկած դէպքում չէին դանդաղում բռնութիւններ ու ամէն տեսակ անկարգութիւններ գործ դնել աղքատ ժողովրդի եւ մանաւանդ գիւղացու վրայ»[2], 11. Հայ-թաթարական բախումների շրջանում ՀՅԴ Արևելյան բյուրոյի կողմից համեմատաբար խաղաղ Կարսի մարզի անտեսումը:

1904-1908 թթ. ՀՅԴ գործիչներից Կարսում իրենց գործունեությունը շարունակում էին Համազասպ Նորհատյանը, Երվանդ Համամջյանը, Խաչատուր Բզնունին, բժիշկ Կարապետ Ղազանչյանը և Սև Կարոն: Մինչև 1905 թ. Կարսում էր նաև Հակոբ Չիլինգարյանը, որը հայ-թաթարական բախումների օրերին ձեռնամուխ է լինում Տուլայից և այլ քաղաքներից զենքի հայթայթմանը: 1905-1906 թթ. Կարսում կարճ ժամանակով գործունեություն են ծավալել նաև Նիկոլ Աղբալյանը, Ավետիս Ահարոնյանը, Ռոստոմը, Սվազցի Բիձան և ուրիշներ: Իսկ Արդահանի շրջանում Հաճի Նազիկը «լեզու էր գտած քիւրտ եւ թիւրքմէն տարրերու հետ եւ ինքնուրոյն վիճակ էր ստեղծած»[3], որը ժամանակի բարդ պայմաններում միանգամայն ձեռնտու էր ՀՅԴ-ի համար:

Մարզում տիրող անիշխանության պայմաններում բնակչության համար հատկապես չարիք էին դարձել նախկին խմբապետերի ղեկավարությամբ գործող ավազակախմբերը, որոնք գողություն ու թալան էին անում գյուղերում և մնում անպատիժ: Այս մասին ՀՅԴ IV

[1] Նույն տեղում, էջ 145:
[2] Նույն տեղում:
[3] **Ռուբէն**, նշվ. աշխ., Զ. հատ., Երեւան, 1991, էջ 22:

ընդհանուր ժողովին ուղղված նամակում Տուրբախը (Հարություն Կիրակոսյան-Այվազյան) գրում է. «ոտնատակ տալով հայ զինուորի վեհ եւ բարձր կոչումը, իւրաքանչիւրը մի մի պատուհաս են դառել խեղճ գիւղացու գլխին. հայ գեղջուկը, հայ կինը, որը երէկ գրկաբաց կերպով ընդունում եւ կերակրում էր հայ զինուորին, այսօր սարսափում է նրա ներկայութիւնից: Ռուս եւ տաճիկ բռնակալութիւնը այնպիսի ստրուկ վիճակի չէ հասցրած հայ գիւղացուն, որպէս դաշնակցական զինուորը»[1]: Մեկ այլ փաստաթղթում կարդում ենք. «Այն բռնութիւնը, թալան-թուրանը, ազատ խօսքի ճնշումը, որ ներկայումս մեր մէջ կայ, գուցէ ոչ մի ժամանակ չի եղել»[2]: Ավազակախմբերը մեծ վնաս էին հասցնում նաև Կարսի մարզի թուրք, քուրդ և մալական բնակչությանը, որոնք մարզի խաչագողերին «յեղափոխական կազմակերպութեան զինուորների» տեղ էին ընդունում[3], որն էլ մարզում սրում էր հայ-թուրքական հարաբերությունները:

Ավազակախմբերից հատկապես նշանավոր էին Աղբյուր Սերոբի նախկին զինակիցներ Խլաթցի Բաղդասարի (Ասլան), Առյուծ Ավագի և հնչակյան Զարզանդի խմբերը: Դրանք իրենց գողացած անասուններն ու ապրանքները փոխադարձ համաձայնությամբ ուղարկում էին Զարիշատի թուրք ավազակներին՝ վաճառելու, և իրենք էլ այնտեղի ավազակների գողացած անասուններն ու իրերն էին ստանում ու վաճառում[4]: Այս մասին Կարսի մարզի Բլուր գյուղի տեղեկագրում կարդում ենք. «Օրը ցերեկով մեր աչքի առաջ ալան-թալան է լինում հայի ձեռքով եւ մենք մեր վախից ու երկիւղից ստրկաբար լռում ենք»[5]: Երբեմն էլ ավազակախմբերի միջև ընդհարումներ էին տեղի ունենում, որի ժամանակ լինում էին նաև սպանություններ[6]:

Նման պայմաններում 1905-1907 թթ. ՀՅԴ Կարսի կոմիտեների գործունեության առանցքն է դառնում երիտասարդությանը ռազմապես կազմակերպելու գործը: Այն հանձնարարված էր Կարսի զինվորական խորհրդին, որի անդամներն էին Արամայիս Ազնավուրյանը, Տուրբախը, Հրաչյա Ավետիսյանը և 1905 թ. կարճ ժամանակով Բաքվից Կարս եկած Հովհաննես Պարոնյանը (Յապոն)[7]: ՀՅԴ Կարսի կենտրոնական կոմիտեի մասնակցությամբ կազմվում է զինվորական ուժերի զբաղվածության և կազմակերպման գործի նախագիծ, ըստ որի ռուսական բանակում ծառայած հայ երիտասարդները համախմբվում և կազմում էին զինվորական մեկ միավոր: Այնուհետև գյուղի մնացած երիտասարդությունը բաժանվում էր թռուցիկ խմբերի և մարզվում նախկին զինվորների

[1] Նիւթեր…, Ե. հատ., էջ 151:
[2] Նույն տեղում, էջ 154:
[3] Տե՛ս **Ռոստոմ**, Նամականի (մահուան ութսունամեակին առթիւ), խմբ. Հր. Տասնապետեանի, Պէյրութ, 1999, էջ 410:
[4] Տե՛ս **Արամայիս Ազնաւուրեանի** յուշերը, գրի առաւ Ե. Հայրապետեան, «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, նոյեմբեր, 1938, թիւ 1, էջ 146-147:
[5] Նիւթեր…, Ե. հատ., էջ 154:
[6] Տե՛ս նույն տեղում, էջ 153:
[7] Տե՛ս **Ա. Ազնաւուրեանի** յուշերը, «Հայրենիք» ամսագիր, նոյեմբեր, 1938, թիւ 1, էջ 145, տե՛ս նաև **Գևորգյան Հ.**, Յապոն (Հովհաննես Պարոնյան). գործը և հուշերը, Երևան, 2012, էջ 11:

ղեկավարությամբ: Միաժամանակ Զինվորական խորհրդի ցուցումով, որն անմիջականորեն հսկում էր զինավարժությունները, խմբապետները որոշում էին գյուղերի ինքնապաշտպանական դիրքերը՝ թաթար-ադրբեջանցիների կողմից եկող վտանգի դեպքում դրանց պաշտպանությունն իրականացնելու համար[1]: «Խմբերում արձանագրուել ցանկացողներից շատերը տաճկահայ երիտասարդներ էին»[2], - հիշում է Յապոնը: Այս զինավարժությունների ընթացքում գործածվում էին «բերդանկա» ու «մոսին» տեսակի հրացաններ և տասնոց ատրճանակներ: Անդրադառնալով այս թռուցիկ խմբերի գործունեությանը՝ Կարսի 1905 թ. օգոստոսի 19 –ին տեղի ունեցած շրջանային ժողովը շեշտում է այդ խմբերի՝ ժողովրդի վրա ունեցած դրական ազդեցությունը[3]:

Այս խմբերի միջոցով կապ էր պահպանվում նաև Կարսի մարզի պետական, ոստիկանական մարմիններում աշխատող հայերի հետ: Նրանց դերը մեծ էր այն առումով, որ նրանք ՀՅԴ տեղական կոմիտեների անդամներին նախօրոք տեղյակ էին պահում ոստիկանության կողմից ձեռնարկվելիք խուզարկությունների մասին: Դրա շնորհիվ ՀՅԴ Կարսի մարզի գործիչներն ու անդամները մշտապես հնարավորություն ունեին խուսափելու հետապնդումից, այլ տեղ փոխադրելու զենքերն ու փոխելու զինապահեստները: Այս առումով Ա. Ազնավուրյանը հատկապես կարևորում է հայ կոմիսար Շահնազարյանի և Կարսի գավառի կոմիսար Լևինսկու քարտուղար, ՀՅԴ Կարսի «Զրաբերդ» կենտրոնական կոմիտեի անդամ Խաչատուր Բզնունու դերը:

1905-1907 թթ. ավելի է մեծանում ՀՅԴ դատարանների դերը, որոնք ունենում են բացառիկ նշանակություն ժողովրդի մեջ ինքնագործունեության մեծացման, կաշառակերության և «թայֆայական զարհուրելի կռիվների ու վէճերի» վերացման առումով:

Կուսակցության **եկամուտները**, նախորդ տարիների համեմատ, նվազել էին, բայց «եղածը կը կատարուէր ինքնաբերաբար եւ ջանք չէր թափուիր աւելացնելու, դրամի գործածութեան հեռանկարները առաջուան նման պարզ չըլլալով»[4]:

1905-1907 թթ. Կարսի մարզից **Երկիր զենք փոխադրելու գործը** շարունակում է իրականացվել նախկին մեթոդներով: Նախընտրելի էր շալակով փոխադրումը, որն անհամեմատ թանկ էր նստում, բայց ավելի հուսալի էր և համեմատաբար քիչ զոհեր էր պահանջում: Զենքի փոխադրման այդ ձևը հայտնի էր «ծծման» մեթոդ անունով, երբ զենք ու զինամթերքը Երկիր էր փոխադրվում գյուղից գյուղ՝ շալակավորների միջոցով: Այս մեթոդով 1905-1907 թթ. հաջողվում է Կարս-Բյուրակնի գծով որոշակի քանակությամբ

[1] Տե՛ս **Ա. Ազնաւուրեան**ի յուշերը, «Հայրենիք» ամսագիր, նոյեմբեր, 1938, թիւ 1, էջ 145-146:
[2] **Տէրունի Յակ.**, **Եապօն**ի (Յովհաննէս Պարոնեան) յուշերը, «Հայրենիք» ամսագիր, յունուար, 1941, թիւ 3, էջ 155, տե՛ս նաև **Գևորգյան Հ.**, Յապոն (Հովհաննես Պարոնյան). գործը և հուշերը, էջ 12:
[3] Տե՛ս Նիւթեր…, Ե. հատ., էջ 138:
[4] **Ռուբէն**, նշվ. աշխ., Զ. հատ., էջ 23:

զենք փոխադրել Դուրան-Բարձրավանդակ (Տարոն-Սասունի շրջան) և Վան-Վասպուրական: ՀՅԴ IV ընդհանուր ժողովին ուղղված Դուրան-Բարձրավանդակի 1906 թ. տեղեկագրում առաջարկվում է. «Զրաբերդում կէդրոնացնել մեզ յատկացուած ուժերը, նշանակել մի ընկեր յատկապէս այդ գործով զբաղուող, որը բաց անէ գծեր Բասէնի եւ լեռնային գծերով, երկու կամ երեք տեղով. պէտք է նշանակել մի ընկեր Բասէն-Խնուս որպէս ապրանք ընդունող եւ գծերին հսկող. պէտք է ունենալ այժմեան եղածի պէս 4-5 հոգուց բաղկացած չորս կամ հինգ խմբեր, որոնցից մինը լինի Զրաբերդ, միւսը Բիւրակն, իսկ Բիւրակնից այստեղ մենք կը փոխադրենք նոյն ձեւով»[1]: Այս գործի արագացման համար անհրաժեշտ է համարվում նաև մեկ այլ գործիչ նշանակել Ապահունիքում՝ «այնտեղի գծերը Ալաշկերտով բաց անելու համար»[2]: Անդրադառնալով վերը նշված խնդիրներին՝ ՀՅԴ Արևելյան բյուրոյին ուղղված 1906 թ. սեպտեմբերի 2-ի թվակիր նամակում Ռուբեն Տեր-Մինասյանն առաջարկում է Կարս-Բասեն-Խնուս գիծը բացելու պարտականությունը հանձնարարել Սեբաստացի Մուրադին. «Խնդրում ենք նրան հանէք այդ աննպատակ կռիւներից (նկատի ունի հայ-թաթարական կռիվները – Կ. Հ.) եւ դնէք Զրաբերդի մեր գործերի վրայ, առանց նրան էլ համշահարիների (թաթարների – Կ. Հ.) դէմ եղած գործը առաջ կ'երթայ, իսկ նրա սպանուելը ցաւ է Երկրի համար»[3], - եզրափակում է Ռուբենը:

Հակառակ դժվարություններին՝ Հ. Յ. Դաշնակցությանը հաջողվում է 1905-1908 թթ. ավելի շատ զենք ու զինամթերք փոխադրել Երկիր, քան նախորդ 15 տարվա ընթացքում: Այդ մասին Ռուբենը գրում է. «1905-1908 թթ. հայ ժողովրդի գլխովին զինման շրջանն է: Ան իր սպառազինումով սկսած էր նոյնիսկ գերազանցել քիւրտերը»[4]:

1905-1908 թթ. զենք ու զինամթերքի ձեռք բերման և Երկիր փոխադրման գործում արձանագրված հաջողությունն էապես պայմանավորված էր նաև 1905-1906 թթ. հայ-թաթարական կռիվների շրջանում Հ. Յ. Դաշնակցության ունեցած ֆինանսական անհամեմատ բարվոք վիճակով: Մի կողմից կովկասահայ մեծահարուստների մի մասի կամավոր նվիրատվությունների, մյուս կողմից՝ «Փոթորիկ» խմբի Հյուսիսային Կովկասում, Մոսկվայում և այլուր կատարած բռնի հանգանակությունների շնորհիվ ՀՅԴ-ն տնօրինում էր ֆինանսական խոշոր միջոցներ, որոնք օգտագործվեցին կովկասահայության ինքնապաշտպանությունը կազմակերպելու համար: Այդ շրջանում Կովկասում ՀՅԴ-ն տնօրինում էր զենք ու զինամթերքի հսկայական ռեսուրսներ: Հայ-թաթարական բախումների ավարտից հետո զենքի կուտակված պաշարների մի մասը տարբեր

[1] Նիւթեր…, Դ. հատ., խմբ. Հր. Տասնապետեանի, Պէյրութ, 1982, էջ 61:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում, էջ 73:
[4] **Ռուբէն**, նշվ. աշխ., Բ. հատ., Երեւան, 1990, էջ 160:

ճանապարհներով, այդ թվում Կարսի մարզի տարածքով, 1906-1908 թթ. փոխադրվեց Երկիր:

Թորգոմի «Որսկան» խմբից հետո Կարսի մարզում այլևս ոչ մի արշավախումբ չի կազմավորվում Երկիր անցնելու նպատակով: 1905 թ. սկզբին այստեղից Երկիր է անցնում ՀՅԴ Բաքվի կենտրոնական կոմիտեի կողմից կազմավորված Հակոբ Զավրիյանի գլխավորած **«բժիշկների» խումբը**: Խմբի նպատակն էր տուժածներին օգնելու նպատակով Մուշ քաղաքում հիվանդանոց բացելը[1]:

1905 թ. խումբը հասնում է Մուշ: Թուրքական կառավարությունն ամեն կերպ խոչընդոտում է խմբի գործունեությանը և շատ չանցած՝ նրա պահանջով այն վերադառնում է Կովկաս, որտեղ արդեն սկսվել էին հայ-թաթարական բախումները: Խմբի անդամներից շատերն իրենց մասնակցությունն են բերում կովկասահայության ինքնապաշտպանության գործին:

1905 թ. փետրվարին ցարական իշխանությունների հրահրմամբ Կովկասում սանձազերծվում են **հայ-թաթարական ընդհարումները**: ՀՅԴ Արևելյան բյուրոյի հրահանգով ՀՅԴ Կարսի կենտրոնական կոմիտեն կարգադրում է տեղական կոմիտեներին և ենթակոմիտեներին. «հայ-թաթարական ընդհարումների առիթ չտալ, եւ թաթարների յարձակման դէպքում ինքնապաշտպանութեան դիմել»[2]: Կարսի շրջանում լիազոր-ներկայացուցիչ է նշանակվում Բիձան (սվազցի Հարություն): Օրվա խնդիրը ժողովրդի զինումն էր: Տեղի ՀՅԴ կենտրոնական կոմիտեի հրահանգով Կարսի մարզի և Ալեքսանդրապոլի գավառի գյուղերում ժողովներ են հրավիրվում և խստիվ պատվիրվում է զենք ձեռք բերել ամեն մի մարտիկի համար: «Հարուստների վրայ պարտականութիւն էինք դնում, որ աղքատների համար եւս զէնքեր գնեն»[3], - հիշում է Ա. Ազնավուրյանը: Գյուղական զինվորական ուժերը բաժանվում են տասնյակների, հիսնյակների և հարյուրյակների՝ ռուսական բանակում ծառայած համապատասխան զինվորական աստիճան ունեցող սպաների գլխավորությամբ:

ՀՅԴ Ալեքսանդրապոլի 1905 թ. հունիսի 21-ի ռայոնական ժողովը քննարկելով հայ-թաթարական ընդհարումների հարցը և ելնելով այն հանգամանքից, որ «Եթէ որեւէ տեղ մենք (այսինքն՝ հայերը – Կ. Հ.) յարձակուեցինք եւ ջարդուեցինք, թուրքը (նկատի ունի թաթար-ադրբեջանցիներին – Կ. Հ.) կարող է միւս վայրերում, ուր ինքը լաւ զինուած է եւ մեծամասնութիւն է կազմում, ելնել հայերի դէմ եւ ընդհանուր ջարդ կազմակերպել»[4],

---

[1] Տե՛ս **Ստեփանյան Գ.**, Բաքվի հայությունը և Սասունի 1904 թ. հերոսամարտը, «Լրաբեր հասարակական գիտությունների (այսուհետև՝ ԼՀԳ)», Երևան, մայիս-օգոստոս, 2008, թիվ 2, էջ 8:
[2] **Ա. Ազնաւուրեանի** յուշերը, «Հայրենիք» ամսագիր, դեկտեմբեր, 1938, թիւ 2, էջ 118:
[3] Նույն տեղում:
[4] Նիւթեր…, Ե. հատ., էջ 382, տե՛ս նաև **Գիւլխանդանեան Ա.**, Հայ-թաթարական կռիւները Անդրկովկասում, «Հայրենիք» ամսագիր, օգոստոս, 1935, թիւ 10, էջ 134:

որոշում է նախահարձակ չլինել, բայց պատրաստվել հակահարված տալու, եթե հարձակումը սկսեն թաթարները:

1905 թ. օգոստոսի 19-ին ՀՅԴ Կարսի շրջանային ժողովում ևս քննարկման առարկա է դառնում հայ-թաթարական հարաբերությունների հարցը: Որոշվում է թռուցիկ խմբերը ցրել հայկական գյուղերում՝ թաթարների կողմից սպասվող հարձակումներին հակահարված տալու համար: Բայց Կարսի մարզում 1905-1906 թթ. ընթացքում հայ-թաթարական բախումների դեպքեր չեն արձանագրվում, իսկ տեղի հայ և մահմեդական հոգևորականները բնակչության մեջ քարոզում էին «հաշտութիւն, եղբայրութիւն, միութիւն»[1]: Այս առումով թերևս տեղին է նշել, որ Կաղզվանի գավառապետը իր հերթին դեռևս 1905 թ. փետրվարի 17-ին իր մոտ է կանչում հայ և թաթար բնակչության ներկայացուցիչներին և «սէր ու համերաշխութիւն է քարոզում», որից հետո կողմերը խոստացել էին «ներել միմեանց եւ ապրել համերաշխ իբրեւ եղբայրներ»[2]:

1906 թ. Կարս եկած Ռոստոմը մարզում հայ-թաթարական հարաբերությունների մասին 1906 թ. փետրվարի 14-ի թվակիր նամակում գրում է. «Շրջանում խաղաղութիւն է տիրում. թիւրքերը, քրդերը հանգիստ են եւ գուցէ այդպէս էլ շարունակուի, եթէ մեր աւազակ դառած հայդուկները իրենց կեղեքումներով նրանց համբերութիւնից չհանեն»[3]: Նույն նամակում Ռոստոմն ավելացնում է. «Թիւրքերը եւ քրդերը ակամայից զինւում են եւ պատրաստւում ինքնապաշտպանութեան համար: Մի շարք միջոցներ ենք ձեռք առնելու՝ պատժելու համար աւազակներին եւ ապացոյցներ տալու համար օտար տարրերին՝ թէ չպէտք է շփոթել սրիկաներին կազմակերպութեան (այսինքն՝ Հ. Յ. Դաշնակցության – Կ. Հ.) անդամների հետ»[4]: Հայտնի չէ, թե Կարսի մարզում ինչ միջոցառումներ են իրականացվել այս ուղղությամբ, բայց ակնհայտ է, որ դրանց հետևանքով 1906 թ. ևս մարզում հայ-թաթարական բախումներ չեն գրանցվել:

Հաջորդ իրադարձությունը, որը մեծ հուզում և իրարանցում է առաջացնում Կարսի մարզում, ՀՅԴ-ի **«Կովկասյան նախագծի»** հրապարակումն էր: Դեռևս 1905 թ. ապրիլին Ժնևում կայացած ՀՅԴ Խորհուրդը այս հարցի վերաբերյալ կայացնում է հետևյալ որոշումը. «Կովկասեան շարժման հարցում ինքնապաշտպանութեան շրջանից անցնել բուն յեղափոխական գործունեութեան, մշակել ծրագիր…, ուղարկել Կովկասեան դաշնակցական մարմիններին՝ ժամանակաւորապէս ղեկավարուելու այդ ծրագրով, թողնելով նրա վերջնական մշակումը եւ հաստատումը առաջիկայ Ընդհանուր ժողովին»[5]:

---

[1] Տե՛ս «Մշակ», քաղաքական-գրական ամենօրեա լրագիր, Թիֆլիս, մարտի 6, 1905, թիւ 36:
[2] Նույն տեղում, փետրուարի 22, 1905, թիւ 29:
[3] **Ռոստոմ**, Նամականի, էջ 411:
[4] Նույն տեղում:
[5] Նիութեր…, Բ. հատ., էջ 231:

Այս որոշումը բուռն վեճեր և մեծ հուզումներ առաջացրին ոչ միայն ՀՅԴ շարքերում, այլև ողջ հայության շրջանում:

«Կովկասյան նախագիծը» մեծ արձագանք է գտնում նաև արևմտահայ գաղթականներով լեցուն Կարսի մարզում, որտեղ արևմտահայերի շրջանում սկսում է տարածում գտնել այն համոզմունքը, թե «Հ. Յ. Դաշնակցութիւնը բաժանուել է «հին ու նոր» ֆրակցիաների, որ Դաշնակցութիւնը «սոցիալ» է դառել, որ նա այլեւս մոռացութեան է մատնել տաճկահայ դատը»[1]: Նախագծի հանդեպ նման մոտեցումներից զերծ չեն մնում նաև ՀՅԴ մեծահամբավ մարտիկներ Սեբաստացի Մուրադը, Կայծակ Առաքելը, Նիկոլ Դումանը, Տուրբախը, Փալաբեխ Կարապետը: Տուրբախը ՀՅԴ IV ընդհանուր ժողովին ուղղված 1907 թ. մարտի 5-ի նամակում գրում է. «Չնայած որ Կովկասեան գործունէութիւնը անհրաժեշտաբար պահանջկոտ այժմէութիւն ունի, բայց եւ այնպէս նախապատուութիւնը պէտք է տալ տաճկահայ նուիրական դատին»[2]: Իսկ Նիկոլ Դումանը ՀՅԴ Արևելյան բյուրոյին ուղղված նամակում գրում է. «Կուսակցութիւնը շատ չպետք է տարուի համառուսական հովերով, այլ կէդրոնացնէ իր ուշքն ու միտքը ազգային գոյութեան պայքարին վրայ, ինքնապաշտպանութեան կռիւներուն վրայ սահմանէն ասդին, թէ անդին»[3]:

Այս հարցում առավել կարծր էր Կարսում գտնվող Փալաբեխ Կարապետի դիրքորոշումը: Նա սրբապղծություն էր համարում ՀՅԴ ծրագրի որևէ փոփոխություն և երբ իմանում է «Կովկասյան նախագծի» մասին, հավաքում է իր պես մտածող մարտիկներին ու պատրաստվում կռիվ հայտարարել ռուսահայ մտավորականությանը, որը համարձակվել էր փոփոխության ենթարկել «սուրբ կնիքն ու ծրագիրը»: Բայց երբ Թիֆլիսում համոզվում է, որ ՀՅԴ կնիքը նույնն է մնացել, վերադառնում է Կարս և այս անգամ էլ «կռիւ կը յայտարարէ միհրանականներուն, իսկ բոլոր չէզոքները կը յայտարարէ դաւաճան»[4]:

«Կովկասյան նախագծին» դեմ են արտահայտվում նաև Կարսում գործող «Կայծակ» խմբի անդամները, որոնք ՀՅԴ Գաղթավայրի (Սուխում) կոմիտեին ուղղված տեղեկագրում գրում են. «Ներկայ ստորագրեալներս ցանկանում ենք, որ Հ. Յ. Դաշնակցական ընկերութիւնը իւր նախկին ծրագիրը անփոփոխ պահէ՝ թիւրքահայ դատին նուիրուած. սոցիալիստ գաղափարին եւ Նախագծին համաձայն չենք»[5]:

---

[1] Նույն տեղում, Ե. հատ., էջ 150:
[2] Նույն տեղում, էջ 151:
[3] **Աւետեան Մ.**, Հայ ազատագրական ազգային յիսնամեայ (1870-1920) յուշամատեան եւ Զօր. Անդրանիկ (վերլուծական հայեցողութեամբ եւ վաւերական տուեալներով), Փարիզ, 1954, էջ 54:
[4] **Վարանդեան Մ.**, Հ. Յ. Դաշնակցութեան պատմութիւն, Երեւան, 1992, էջ 202:
[5] Նիւթեր…, է. հատ., խմբ. Ե. Փամպուքեան, Պէյրութ, 2010, էջ 140:

«Կովկասյան նախագիծը» քննարկվում է նաև ՀՅԴ Օլթիի կառույցի 1906 թ. հոկտեմբերի 14-ի ժողովում, որում ընդունվում է հետևյալ բանաձևը. «Տաճկահայ դատը պետք է լինի Հ. Յ. Դաշնակցութեան գործունէութեան համար գլխավոր, բուն եւ անմիջական նպատակ՝ իբրեւ ամենաճնշուած ժողովրդի, իսկ Կովկասի ինքնապաշտպանութեան եւ ռուսական ազատագրական շարժումներին հետեւել այն չափով, որ չափով անհրաժեշտ կարիքը կը ստիպի՝ նայելով հանգամանքներին»[1]:

Կարսի մարզի բնակչության մեջ տիրապետող է դառնում այն գաղափարը, թե «Սասնոյ ծախողութեան գլխաւոր պատճառը Կովկասեան նախագիծն ընդունիլն է եւ Ռուսիոյ թշնամութիւնը վաստկիլը»[2]:

Այսպիսով, Կարսի մարզի ՀՅԴ գործիչներն ու արևմտահայ գաղթականները խիստ ընդդիմադիր դիրքորոշում ունեին «Կովկասյան նախագծի» հանդեպ, որը համարվում էր արևմտահայ ազատագրական պայքարին խոչընդոտող գլխավոր գործոնը: Այս հանգամանքն իր բացասական ազդեցությունն ունեցավ հետագայում մարզի տարածքում ՀՅԴ կառույցների թուլացման, ապա քայքայման գործընթացի վրա:

ՀՅԴ բյուրոյի կարգադրությամբ ՀՅԴ բոլոր կենտրոնական կոմիտեներին կից ստեղծվում են բանվորական հանձնախմբեր, որոնք կենտրոնական կոմիտեների ղեկավարությամբ ու հրահանգներով պետք է զբաղվեին բանվորների և աշխատավորների ցույցերի ու գործադուլների կազմակերպմամբ: Բացառություն չի կազմում նաև Կարսը, որտեղ բանվորական հանձնախմբի մեջ են մտնում Ստեփան Ստեփանյանը, Ալեքսան Ալոյանը, Հմայակ Տրդատյանը, ախալցխացի Գրոն, դսեղցի Արմենակ Մամիկոնյանը և Համբարձում Ղարիբյանը (Պլո թագավոր): 1905 թ. Հ. Ղարիբյանն իր շուրջն է հավաքում 100-ի չափ արհեստավորներ ու բանվորներ և Կարսում կազմակերպում «Պլո թագավորի ցույցը»: Ցուցարարներին են միանում նաև «ժողովրդի մի ահագին բազմութիւն իբր դիտող ու հետաքրքրուող»[3]: Ցուցարարները, իրենց ճանապարհին կոտրելով խանութների ցուցափեղկերի ապակիները, Ալեքսանդրյան փողոցով շարժվում են դեպի Կարսի քաղաքային այգի: Այստեղ Հ. Ղարիբյանը բարձրանում է ամբիոն և իր ճառում «բանուորներին ու արհեստաւորներին առաջարկում՝ կազմակերպուել, միանալ եւ պայքարել շահագործողների դէմ»[4]: Այդ ընթացքում ոստիկանությունն ու քաղաքային կոմիսարը հանդիսատեսի դերում էին՝ զգուշանալով ժողովրդին գրգռելուց: Ցույցից հետո բանվորներն ու ժողովուրդը ցրվում են իրենց տներում, իսկ Հ. Ղարիբյանն էլ վերադառնում է իր կաշեգործական խանութը: Թեև այս

[1] Նույն տեղում, Ե. հատ., էջ 148:
[2] **Ռուբէն**, նշվ. աշխ., Զ. հատ., էջ 23:
[3] **Ա. Ազնաւուրեանի** յուշերը, «Հայրենիք» ամսագիր, հոկտեմբեր, 1938, թիւ 12, էջ 138:
[4] Նույն տեղում, էջ 139:

անգամ Հ. Ղարիբյանը տեղական իշխանության կողմից պատասխանատվության չի ենթարկվում, բայց դեպքից մի քանի տարի անց, երբ բացվում է ՀՅԴ հայտնի դատավարությունը, 159 դաշնակցականների դեմ հարուցված քրեական գործով անցնող մեղադրյալների ցանկում կարդում ենք նաև նրա անունը[1]:

Վերը նշված ցույցից հետո Կարսում 1905-1907 թթ. Ռուսաստանի Սոցիալ-դեմոկրատական բանվորական կուսակցության հայկական մասնաճյուղի կողմից կազմակերպվում են մի շարք ցույցեր և գործադուլներ: Այսպես՝ 1905թ. ապրիլի 18-ին Կարսում գործադուլի են դիմում հացթուխները՝ աշխատավարձի բարձրացման պահանջով, իսկ հոկտմբերի 22-ին Կարսի քաղաքային այգում ցույց են կազմակերպում Կարսի բանտից ազատված Բաքվի 32 բանտարկյալները[2]: Նույն ամսում Կարսում ընդհանուր գործադուլ են հայտարարում քաղաքի կոշկակարներն ու հացթուխները, իսկ 1905թ. նոյեմբերի 16-ից մինչև դեկտեմբերի 14-ը գործադուլի են դիմում կապի աշխատողները, որի հետևանքով ընդհատվում է մարզի ներքին հաղորդակցությունը: 1905թ. նոյեմբերի 22-ին և 24-ին ցույցի են դիմում նաև Դերբենդյան հետևակային գնդի զինվորները՝ պահանջելով, որ իրենց արձակուրդ տան[3]: Հուզումներ են տեղի ունենում նաև Կարսի մարզի այլ բնակավայրերում: Հրապարակվում են մանիֆեստներ, կայազորներում տարածվում են գաղտնի կոչեր և թռուցիկներ, իսկ բանվորների ցույցերին սկսում են մասնակցել նաև զինվորներ և Կարսի ռեալական ուսումնարանի սաները[4]:

1904-1906 թթ. Կարսի մարզում ՀՅԴ «Ձրաբերդ» կենտրոնական կոմիտեի ցուցումով մի շարք **ահաբեկչական ակտեր** են իրագործվում շրջանի պետական պաշտոնյաների, մատնիչների և դավաճանների, տեղական բնակչության հարստահարիչների և մի քանի խմբապետերի նկատմամբ: Այսպես, 1904 թ. նոյեմբերի 24-ին ՀՅԴ Կարսի կ. կոմիտեի որոշմամբ գնդակահարվում է Կարսի հաշտարար դատարանի գործավար Արսեն Թութունջյանը: Թեև «Հնչակ»-ն այդ առթիվ գրում է, թե սպանության պատճառը եղել է վերջինիս «ենիչէրիների կուսակցութեանը (նկատի ունի Հ. Յ. Դաշնակցությանը – Կ. Հ.) պատկանիլ չուզենալը»[5], բայց իրականում սպանության դրդապատճառը սպանվածի մատնիչ ու դավաճան լինելու հանգմանքն էր: 1904 թ. ընթացքում Կարսի ՀՅԴ կենտրոնական կոմիտեի որոշմամբ ահաբեկչություն է իրականացվում աքսեղազեցի քուրդ Օհան Գլոսնիի և Կարսի ժանդարմերիայի պետի թարգման ու քաղաքային գրադարանի գրադարանապետ Գրոզդովի հանդեպ, որը

[1] Հայաստանի Ազգային Արխիվ (այսուհետև՝ՀԱԱ), ֆ. 1457, g. 3, գ. 2, թ. 1018-1020, նա'և նույն տեղում, գ. 3, թ. 2005, 2325, 2342, նա'և Հ. Յ. Դաշնակցության մեծ դատավարության թղթածրարները, «Վէմ» (համահայկական հանդես), Երեւան, յուլիս-սեպտեմբեր, 2011, թիւ 3 (35), էջ 239-240, թիւ 4 (36), էջ 207:
[2] Տե'ս **Պողոսյան Ա.**, Սոցիալ-տնտեսական հարաբերությունները Կարսի մարզում 1878-1920թթ., Երևան, 1961, էջ 195:
[3] Տե'ս նույն տեղում, էջ 203:
[4] Տե'ս **Ղարիբջանյան Գ.**, Հայ ժողովրդի ազատագրական պայքարը XIX դարի վերջին և XX դարի սկզբին, Երևան, 1986, էջ 46:
[5] «Հնչակ», կէդրոնական օրգան Հնչակեան կուսակցութեան, դեկտեմբեր, Փարիզ, 1904, թիւ 12:

«գրադարանը արբեցողութեան վայր եւ ժամդարմների բոյն էր դարձրել»[1]: 1904 թ. մահափորձ է կատարվում նաև Կարսի ոստիկանապետ Խերխեուլիձեի դեմ[2]: Իսկ 1905 թ. մարտի 1-ի առավոտյան Կարսի Ալեքսանդրյան փողոցում սպանվում է Կարսի ոստիկանապետի օգնական Սավանելլին[3]:

1906 թ. ՀՅԴ Կարսի կենտրոնական կոմիտեն ահաբեկման որոշում է ընդունում նաև թուրք Շեյխ Հասանի նկատմամբ, որը սպանել էր 3 հայ երիտասարդի: Նա Ալեքսանդրապոլում տեղի քրդերից ու հայերից զենք էր գնում և ապա Ալեքսանդրապոլ-Մավրակ-Ճալա-Ալաջա-Տիկոշ-Կաղզվան գծով փոխադրում Ալաշկերտ: Նրան ահաբեկելու պարտականությունը հանձնարարվում է Ա. Ազնավուրյանին, որն իր կուսակցական ընկերների հետ կարողանում է բռնել վերջինիս և հարցաքննությունից հետո իրականացնել որոշումը: Ահաբեկման հաջորդ որոշումը ՀՅԴ Կարսի կենտրոնական կոմիտեն կայացնում է ղալաջուղցի Մանուկի նկատմամբ, որը մատնության անհաջող փորձ էր կատարել (ռուսերեն չիմանալը խանգարել էր): Մանուկին ահաբեկելու առաջին փորձն անցնում է անհաջող: Որոշման իրականացումը հանձնարարվում է Կարսում գտնվող Սեբաստացի Մուրադին և Սեպուհին: Կայացված վճիռը մեծ դժվարությամբ գործադրվում է: Թեև դեպքի առթիվ հետաքննություն է տեղի ունենում, բայց Մանուկի ընտանիքի անդամները հայտնում են, որ չեն ճանաչում ահաբեկչին: Դրանով էլ գործը փակվում է[4]: 1906 թ. ընթացքում Կարսի մարզում տեղի է ունենում ևս մեկ ահաբեկչություն. այս անգամ թիրախը Տիկոշ գյուղացի հայտնի մատնիչ Ադըլն էր, որը դիմել էր կառավարությանը և «հինգ ոստիկան էր ստացել իր տրամադրութեան տակ»[5]: Թեև ահաբեկման վճիռն իրագործելը դժվարին խնդիր էր, բայց փորձառու ահաբեկիչներ խլաթցի Մելքոնը և Օձ Պետրոսը կարողանում են մտնել Ադըլի տուն, իրականացնել այն և աննկատ հեռանալ:

1905 թ. վերջին տեղի են ունենում ՀՅԴ Կարսի կենտրոնական կոմիտեի նոր ընտրություններ, որոնց ժամանակ կենտրոնական կոմիտեի անդամներ են ընտրվում Համազասպ Նորհատյանը, Խաչատուր Բզնունին, բժիշկ Կարապետ Ղազանչյանը, Երվանդ Համամջյանը, բժիշկ Ասոյանը, Զոհրաբ Զանրազյանը և Սև Կարոն: Իրենց ձեռքը վերցնելով Կարսի շրջանի հեղափոխական գործի ղեկավարությունը՝ նրանք փորձում են միջոցներ ձեռնարկել մարզում ստեղծված անիշխանական դրությունը վերացնելու համար: Նորակազմ կենտրոնական կոմիտեն կազմում է մի բանաձև-առաջարկ, որը ներկայացվում է ՀՅԴ Արևելյան բյուրոյին: Այն վերաբերում էր Կարսի մարզին և ընդգրկում

[1] Նիւթեր…, Ե. հատ., էջ 330, տե՛ս նաև **Ակնունի էդ.**, Դէպի կռիւ, Ժընեւ, 1904, էջ 265:
[2] Տե՛ս **Ակնունի էդ.**, նշվ. աշխ., էջ 265:
[3] Տե՛ս «Մշակ» օրաթերթ, մարտի 5, 1905, թիւ 35:
[4] Տե՛ս **Ա. Ազնաւուրեան**ի յուշերը, «Հայրենիք» ամսագիր, նոյեմբեր, 1938, թիւ 1, էջ 148:
[5] Նույն տեղում, էջ 149:

էր հետևյալ կետերը՝ «1. Ժողովրդի զինում՝ իր շահերը եւ իրաւունքները իբրեւ ազգ պաշտպանելու համար, 2. Տեռորի ենթարկել բոլոր այն պաշտօնեաներին, որոնք առանձնապէս հետամուտ են հայ ազգի եւ յեղափոխական գործի յաջողութեանը վնասելուն, 3. Համերաշխ գործունէութիւն այն բոլոր տարրերի եւ կուսակցութեանց հետ, որոնք ընդունում են Կովկասի դաշնակցութեան գաղափարը, 4. Ռազմական գործը վարչականից բաժանել եւ ռազմականը յանձնել ընդհանուր ժողովի կողմից ընտրուած մի յատուկ մարմնի, որի անդամները լինելով մասնագէտ անձեր՝ կազմելու են կռուի եւ ապստամբութեան ծրագիր, կազմակերպելու են զէնքի գնման եւ փոխադրութեան գործը, իսկ բոլոր Կէդրոնական կոմիտէները պարտաւոր են զինուորական գործերում օժանդակել շտաբին, 5. Ժխտել բռնի միջոցով դրամ հաւաքելը, 6. Գիւղական պահապանները վերացնել, քանի որ չարիք են դառնում հասարակութեան համար, 7. Շարունակել կուսակցական դատաւարութիւնը»[1]: ՀՅԴ Կարսի կենտրոնական կոմիտեն հասկանում էր, որ միայնակ, տեղական ուժերով այս ծրագիրը կյանքի կոչելը անհնարին է, ուստի ՀՅԴ Արևելյան բյուրոյից խնդրում էր նաև «զարգացած ու խելահաս մարդիկ՝ ամուր ձեռքով ժողովուրդի նիւթական բարօրութեան եւ բարոյական վերակազմութեան գործին հիմք դնելու համար»[2]: Կենտրոնական կոմիտեն միաժամանակ հույս էր հայտնում, որ բյուրոն չի մերժի առաջարկը և որոշակի գումար կհատկացնի այն իրագործելու համար: Նամակ-առաջարկին ի պատասխան ՀՅԴ Արևելյան բյուրոն Կարս է ուղարկում իր ներկայացուցչին: Վերջինս բավարարվում է Կարսի ՀՅԴ կենտրոնական կոմիտեին 400 ռուբլի տալով: Դա շատ քիչ էր տեղական կարիքները հոգալու համար, ուստի Կարսի կ. կոմիտեն իր 1906 թ. նոյեմբերի 9-ի թվակիր նամակով ՀՅԴ Արևելյան բյուրոյից տեղական կարիքներին բավարարություն տալու համար պահանջում է «առանց ուշացնելու փոխադրել 2000 ռուբլի»[3]: Բայց, ըստ երևույթին, մինչև ՀՅԴ IV ընդհանուր ժողովը ՀՅԴ Արևելյան բյուրոյի կողմից այլևս որևէ անդրադարձ չի եղել Կարսի մարզում ստեղծված իրադրությանը: Համենայն դեպս, մեր ձեռքի տակ այդ մասին վկայող որևէ փաստ չունենք:

1907 թ. փետրվարի 22-ից մայիսի 4-ը Վիեննայում գումարվում է ՀՅԴ IV ընդհանուր ժողովը, որի քննարկած հարցերից Կարսի մարզի հեղափոխական կառույցների և տեղի հայության համար կարևոր նշանակություն ունեին հատկապես «Կովկասյան նախագծին», կովկասահայության ինքնապաշտպանությանը, արշավախմբերին, դրամի բռնի հանգանակությանը և ավազակախմբերի վերացմանը վերաբերող որոշումները: Այս խնդիրների առնչությամբ բուռն քննարկումներից հետո ժողովը ընդունում է հետևյալ որոշումները՝ «1. Հ. Յ. Դաշնակցութիւնից մերժում են ժողովրդի վրայ բռնացող

[1] Նիւթեր…, Ե. հատ., էջ 141-142:
[2] Նույն տեղում, էջ 141:
[3] Նույն տեղում, էջ 155:

զինուորները եւ նրանց դէմ կռիւ է յայտարարուում կազմակերպական միջոցներով: 2. Աւարառութիւնների, աւազակային խմբերի, ինչպէս եւ անարխիայի առաջն առնելու համար անհրաժեշտ է դատուում կազմակերպել եւ իրար շաղկապել գիւղերը: 3. Խստիւ արգիլել բռնի միջոցների գործածութիւնը հանգանակութեան գործում: 4. Ամենախիստ պատասխանատուութեան ենթարկել այն անդամներին եւ մարմիններին, որոնք կը շարունակեն դիմել բռնի միջոցների: 5. Ազդու միջոցներ ձեռք առնել վերջ տալու այն բռնի հանգանակութիւններին, որ կատարում են այլեւայլ բախտախնդիրներ կազմակերպութեան (Հ. Յ. Դաշնակցության – Կ. Հ.) անունից: 6. Ինքնապաշտպանութեան խմբերու ձեռք բերած զէնքերը կը համարուին համայնական սեփականութիւն, կը գտնուին Դաշնակցութեան կանտրոլի տակ եւ կը գործադրուին միմիայն անոր հրահանգներով: 7. Զինման գործը պէտք է կատարուի աստիճանաբար, ինքնապաշտպանութեան, խումբերու կազմութեան եւ անոնց զինուորական կրթութեան զարգացման զուգընթաց: 8. Ինքնապաշտպանութեան գործը իբրեւ համաժողովրդական գործ՝ պէտք է ամբողջովին թողնել ժողովրդին: 9. Անակնկալ դէպքերում, եթէ ժողովուրդը հրաւիրէ Դաշնակցութիւնը՝ ղեկավարելու ինքնապաշտպանութեան գործը իր՝ ժողովրդի, պատասխանատուութեամբ, նրա անունից եւ նրա միահամուռ աջակցութեամբ, ընդհանուր ժողովը վերապահում է ազատութիւն տեղական մարմիններին՝ վարուելու ըստ իրենց հայեցողութեան: 10. Ապագայում մեր մղելիք կռուի մէջ, այլեւայլ յեղափոխական ձեռնարկների հետ միասին՝ արշաւախմբերն եւս կարող են օգտակար լինել, երբ ներսի վարիչ մարմինները վստահ են, որ այդ խմբերը կը դարձնեն կռիւը ազդու, լայն եւ յարատեւ: 11. Միջոցներ ձեռք առնել՝ միլիցիայի սկզբունքով կամ այլ ձեւով, առանց վարձի, մարտական դաշնակցական խմբեր մարզել՝ ապագայ այդօրինակ գործողութիւնների համար»[1]: Բացի վերահիշյալ որոշումներից, ՀՅԴ IV ընդհանուր ժողովը որոշում է նաև՝ «1. Երկու դատերն էլ՝ թիւրքահայ եւ կովկասահայ, առաջ մղել Հ. Յ. Դաշնակցութեան դրօշի ներքոյ: 2. Վավերացնել 1905 թ. ՀՅԴ Խորհրդի մշակած «Կովկասեան նախագիծը»: 3. Վերահաստատել 1904 թ. ընդունած մարտաւարութիւնը՝ ապստամբութիւն, զինուած դիմադրութիւն կառաւարական ոյժերի հանդեպ, քաղաքական տեռոր, ցոցական ձեռնարկներ, ժողովրդական զինուած ինքնապաշտպանութիւն, քաղաքական եւ տնտեսական գործադուլներ եւ այլն»[2]:

Փաստորեն վերոհիշյալ որոշումներով ՀՅԴ-ն թեև չէր հրաժարվում արևմտահայ ազատագրական պայքարի ղեկավարումից, բայց այսուհետև առաջնությունը տրվում էր կովկասահայության ինքնապաշտպանության կազմակերպմանն ու ցարիզմի դեմ

[1] Նույն տեղում, Գ. հատ., խմբ. Հր. Տասնապետեանի, Պէյրութ, 1976, էջ 262, 303:
[2] **Տասնապետեան Հր.**, Հ. Յ. Դաշնակցութիւնը իր կազմութենէն մինչեւ Ժ. ընդհանուր ժողովը (1890-1924 թթ.), Աթէնք, 1988, էջ 87-88:

պայքարին: Ինչպես նշում է Լեոն. «Դաշնակցութիւնը, որ հիմնուած էր բացառապէս թիւրքահայերի համար եւ նպատակ ունէր կռուել բացառապէս սուլթանական բռնակալութեան դէմ, այժմ իր խնամակալութիւնը տարածում էր եւ ռուսահայութեան վրայ եւ իր բաժինն էր դարձնում նաեւ ցարական բռնակալութեան դէմ կռուելը»[1]:

ՀՅԴ IV ընդհանուր ժողովից անմիջապես հետո միջոցառումներ ձեռնարկվեցին Կարսի մարզում տիրող անիշխանական վիճակը վերացնելու և ավազակախմբերին ու խաչագողերին չեզոքացնելու ուղղությամբ: Առաջին քայլը խլաթցի Առյուծ Ավագի սպանությունն էր: 1907 թ. ՀՅԴ Կովկասի ահաբեկիչ մարմինը Առյուծ Ավագից գրավոր պահանջում է մինչև մայիսի 20-ը իր խմբով հեռանալ Բաթում: Բայց Ավագը, հակառակ այն բանի, որ պատրաստակամություն էր հայտնել «ենթարկուելու կազմակերպութեան որոշումներին», ոչ միայն մերժում է ատյանի հրավերը, այլև «հրապարակաւ նախատալից հայհոյանքներ է թափում յեղափոխական կազմակերպութեան հասցէին»[2]: Կովկասի ահաբեկիչ մարմինը, հաշվի առնելով վերջին երկու տարում Ավագի կողմից Կարսի մարզում հայ բնակչության նկատմամբ իրականացրած կեղեքումները, սպանություններն ու բռնաբարության դեպքերը, որոշում է մահապատժի ենթարկել նրան: Այս առընչությամբ Թիֆլիսից Կարս է ժամանում Սևքարեցի Սաքոն[3]: Առյուծ Ավագին ահաբեկելու գործը հանձնարարվում է Ա. Ազնավուրյանին: Բայց նա, հաշվի առնելով Ավագի քաջարի ֆիդայի լինելու հանգամանքը, հրաժարվում է: Մի քանի ամիս անց ՀՅԴ Արևելյան բյուրոն Կարսի շրջանից նոր բողոքագրեր է ստանում Առյուծ Ավագի դեմ: Այս անգամ Ավագին ահաբեկելու գործը հանձնարարվում է Քեռուն (Արշակ Գավաֆյան): Վերջինիս ուղարկած ահաբեկիչը գալիս է Կարս և Համազասպ Ղասաբյանի ու Հրաչյա Ավետիսյանի հետ 1908 թ. մայիսի 17-ին ահաբեկում Ավագին ու նրա երկու զինվորներին[4]:

Առյուծ Ավագի ահաբեկումից հետո ՀՅԴ Կովկասի ահաբեկիչ մարմինը 1908 թ. մայիսի 20-ին հրատարակում է մի ազդ, որով, ի լուր բոլորի հայտարարելով Առյուծ Ավագի սպանության մասին, Կարսի մարզի մյուս ավազակներից ու ավազակախմբերից պահանջում է «անմիջապէս ձգել հեռանալ այդ շրջանից», հակառակ դեպքում սպառնալով մահվան վճիռ կայացնել նաև նրանց հանդեպ: Միևնույն ազդով Կարսի մարզի հասարակությանը կոչ էր արվում «անխնայ հալածել եւ խփել բոլոր նոյն կարգի զեղծարարներին, որոնք գալիս են բռնի պահանջներ անելու Դաշնակցութեան կամ յեղափոխութեան անունից»[5]:

---

[1] **Լէօ**, Թիւրքահայ յեղափոխութեան գաղափարաբանութիւնը, Բ. հատ., Փարիզ, 1936, էջ 47:
[2] Նիւթեր…, Ե. հատ., էջ 366:
[3] Տե՛ս **Ա. Ազնաւուրեանի** յուշերը, «Հայրենիք» ամսագիր, մայիս, 1938, թիւ 7, էջ 138:
[4] Տե՛ս նույն տեղում, սեպտեմբեր, 1938, թիւ 11, էջ 155:
[5] Նիւթեր…, Ե. հատ., էջ 366:

ՀՅԴ Արևելյան բյուրոյի որոշմամբ Կարսի մարզում անիշխանության դեմ պայքարելու համար այստեղ է ուղարկվում մի կազմակերպված խումբ: Վերջինս անիշխանության դեմ պայքարելու փոխարեն զբաղվում է շանտաժով[1]: Ստեղծված իրավիճակը քննության է առնվում ՀՅԴ Արևելյան բյուրոյի ռայոնական ժողովի 1909 թ. հունվարի 2-ի նիստում: Ժողովն արձանագրում է, որ «Այնտեղ, որտեղ չկայ մեր կազմակերպութիւնը, ուժեղացել է շանտաժը»[2]: Ի վերջո որոշվում է անարխիայի դեմ գյուղերում պայքարել «գիւղացիական միութիւնների միջոցով», իսկ քաղաքներում՝ միայն այն դեպքում, երբ. «վտանգի է ենթարկւում մեր (ՀՅԴ – Կ. Հ.) կազմակերպւած մասսան իբրեւ ամբողջութիւն» և երբ «շանտաժը կատարւում է Դաշնակցութեան անունից կամ դաշնակցական անդամների ձեռքով, երբ շանտաժը ուղղուած է դաշնակցական անդամի դէմ՝ իբրեւ կուսակցութեան անդամի»[3]:

Վերոհիշյալ որոշումները կատարվել են թերի կամ ընդհանրապես չեն կատարվել, քանի որ 1909 թ. օգոստոսին Վառնայում (Բուլղարիա) կայացած ՀՅԴ V ընդհանուր ժողովին ներկայացված տեղեկագրում Կարսի մարզում 1909 թ. տիրող իրավիճակի մասին նշվում է՝ «1. Պահեստների դրութիւնը գաղնապահութեան տեսակէտից թոյլ: 2. Զէնքերի դրութիւնը՝ ոչ բաւարար: 3. Հաշուի մէջ խոշոր տարբերութիւն իւր նախկին հաշուի համեմատ: 4. Նայած իւր քանակութեան եւ արուած իւր գործողութեան՝ ծախքը համեմատաբար շատ: 5. Պահեստապահը իւր դերի մէջ չէ, բայց ունի դրամական խոշոր ապառիկներ՝ մօտ 2000 ռուբլի»[4]:

Այս ամենը ցույց են տալիս, որ չնայած ՀՅԴ Կարսի «Զրաբերդ» կենտրոնական կոմիտեի, մասամբ նաև ՀՅԴ Արևելյան բյուրոյի գործադրած ջանքերին՝ 1908-1909 թթ. ընթացքում Կարսի մարզում չի հաջողվել վերջ տալ անիշխանությանը և բնակչության հանդեպ իրականացվող թալանին ու ավազակային հարձակումներին: Փաստորեն, Կարսի մարզի ՀՅԴ կազմակերպություններն ու կոմիտեները 1906 թվականից որևէ իրական իշխանություն չեն ունեցել: Նրանց կազմալուծմանն էլ ավելի է նպաստել ՀՅԴ-ի դեմ ցարական իշխանությունների 1908-1912 թթ. հալածանքներն ու կազմակերպված դատավարությունը:

1908 թ. հուլիսի 10-ին (ն. տ. 23-ին) երիտթուրքերը իրագործեցին հեղաշրջում, որի հետևանքով Օսմանյան կայսրությունում հաստատվեցին սահմանադրական-միապետական կարգեր: Այս հանգամանքը հույսեր է արթնացնում Կովկասի, նաև Կարսի մարզի տարածքում հանգրվանած արևմտահայ գաղթականության շրջանում: Վերջինս

[1] Տե՛ս նույն տեղում, է. հատ., էջ 168:
[2] Նույն տեղում:
[3] Նույն տեղում, էջ 169-170:
[4] Նույն տեղում, Զ. հատ., խմբ. Եր. Փամպուքեանի, Պէյրութ, 2010, էջ 466:

ցանկություն է հայտնում վերադառնալ իր նախկին բնակավայրերը: ՀՅԴ-ն որոշում է ընդառաջել այդ ցանկությանը: Ինչպես գրում է Ռուբենը. «Կուսակցութեան համար սահմանի այս կողմն ալ, այն կողմն ալ Հայաստան է եւ հայրենիք. ան չի կրնար նախապատուութիւն տալ այս կամ այն կողմը ապրելուն, այդ կախուած է իրենց՝ փոխադրուողներու նախապատուութենէն»[1]:

Արևմտահայ գաղթականների՝ Երկիր վերադառնալու գործում իր ներդրումն է ունենում նաև Կովկասի բարեգործական ընկերությունը, որը զբաղվում էր հարցի իրավաբանական կողմի նախապատրաստությամբ[2]:

Մի կողմից ռուսաստանյան 1-ին հեղափոխության պարտությունը, մյուս կողմից ՀՅԴ IV ընդհանուր ժողովում «Կովկասյան նախագծի» հավանության արժանանալը պատճառ հանդիսացան, որ ցարական իշխանությունները պատժիչ միջոցառումներ ձեռնարկեն ՀՅԴ-ի դեմ: 1908 թ. սկսվում են հալածանքներ, կատարվում են զանգվածային ձերբակալություններ, փակվում են դաշնակցական թերթերը, հրատարակչությունները, արհմիությունները, արգելվում հանրահավաքները: Ինչպես գրում է ժամանակակիցը. «Բոլորը՝ մեղավոր ու արդար, դաշնակցական եւ ոչ դաշնակցական, ձերբակալվեցին: Խուզարկութիւնները լայն չափեր ստացան, բանտերը լցուեցին: Հայ ժողովրդի ինտիլիգենցիան եւ բուրժուազիան՝ վաճառականութիւն, գործատերեր, խմբագիր, ուսուցիչ, գիւղացի, բոլորն էլ պետական հանցագործներ հռչակուեցին եւ իբրեւ դաշնակցականներ բանտ նետուեցին: Ամբողջ կովկասահայութիւնը ամբաստանուեց: Հայ ժողովրդի ըմբոստ, բողոքող ոգին հանկարծ կանգ առաւ, ստորերկրյա գործերը դադարեց: Թւում էր, թէ երբեք էլ չի եղել»[3]:

Այս բռնությունները հայկական միջավայրում ստացան «Ստոլիպինյան» կամ «Լիժինյան» ռեակցիա անվանումը: «Ինչպէս բանտարկութիւնները, այնպէս եւ Դաշնակցութեան դէմ կազմակերպուած դատաւարութիւնները պարզեցին, որ ցարի ոստիկանական շները տարիների տքնաջան աշխատանքներով կարողացել էին կազմել մեր կուսակցական գործիչների համարեա թէ լրիւ ցանկը եւ կատարած գործը», - գրում է Ա. Ազնավուրյանը[4]: Նախկին խմբապետ Միհրանի (Գաբրիել Քեշիշյան) կատարած մատնություններով ձերբակալվում են ՀՅԴ շատ հայտնի գործիչներ: Ստեղծված իրավիճակի մասին Արամայիս Տեր-Դանիելյանը գրում է. «Մինչ դեռ իրերի թարսութեամբ Տաճկահայաստանում բոլոր քաղաքական գործիչները ազատ գրում, խօսում ու գործում էին, Ռուսաստանում հալածանքը, մանաւանդ Դաշնակցութեան դէմ, հասել էր ծայրայեղ

[1] **Ռուբէն**, նշվ. աշխ., Զ. հատ., էջ 25:
[2] Տե՛ս նույն տեղում:
[3] ՀԱԱ, ֆ. 1457, ց. 2, գ. 16, թ. 2-3:
[4] **Ազնաւուրեան Ա.**, Ցարական հալածանքը Հ. Յ. Դաշնակցութեան դէմ, «Հայրենիք» ամսագիր, ապրիլ, 1940, թիւ 6, էջ 114:

չափերի: Լիժինը գործում էր… եւ բանտերը բէրնէ բէրան լցուած էին հայ գործիչներով: Ով կարողացել էր՝ փախել էր Տաճկաստան կամ Պարսկաստան, ով չէր կարողացել՝ կամ ձերբակալուել էր կամ հերթի էր սպասում. ազատուելու հնար չկար…»[1]: Այս ամենում իրենց ստոր դերն էին կատարում նաև հայ մատնիչները. «Դուրս եկան մէծ ու փոքր միհրաններ, ու սկսեցին մատնութիւններ: Հայ ժողովրդի տականքը իր ողորմելի կաշին փրկելու յույսով դիմեց մատնութիւնների, որի հետեւանքով խուզարկվեցին Դաշնակցութեան բոլոր զինական պահեստները եւ գրաւեցին զենքն ու ռազմամթերքը»[2]: Ինչպես իրավացիորեն նշվում է մի փաստաթղթում. « Կռիւը Դաշնակցական շարքերի եւ ընդհանրապէս կովկասահայ մտաւորականութեան դէմ …մղվում էր հայ ժողովրդի տականքների աջակցութեամբ եւ խրախուսանքով»[3]:

Սկսված հալածանքները լուրջ հարված հասցրին նաև ՀՅԴ Կարսի կառույցին: Ձերբակալվում են «Զրաբերդ» կենտրոնական կոմիտեի անդամներ Համազասպ Նորհատյանը, Խաչատուր Բզնունին, ՀՅԴ անդամներ Հակոբ Չիլինգարյանը, Արամայիս Ազնավուրյանը, Համբարձում Ղարիբյանը (Պլո թագավոր), Մինաս Վարդանյանցը, Սահակ Ղարիբյանը, Ամիրխան Գասպարյանցը, Կաղզվանի ՀՅԴ կոմիտեի անդամ Գարեգին Հեքիմյանցը (Եքոմյան), Աբրահամ Սարգսյանցը, Հովո Պողոսովը[4], Մարտիրոս Կասոյանը, Բիթլիսցի Փանոսը[5]: Բոլոր ձերբակալվածները մեղադրվում էին. «Հայ Հեղափոխական Դաշնակցություն կուսակցության հանցավոր ընկերության մասնակցության մեջ. ընկերություն, որն իր առջև խնդիր էր դրել գործադուլների, տնտեսական, կազմակերպչական ու քաղաքական ահաբեկչությունների ճանապարհով և զինված ապստամբության միջոցով ռուսական պետության մեջ հաստատված հիմնական օրենքներով կառավարման ձևի հանդեպ բռնի ոտնձգության և գոյություն ունեցող հասարակական կարգի տապալման միջոցով դաշնակցային, ժողովրդավարական հանրապետության հիմնման համար»[6]: Նույն ամբաստանագրում նշվում է, որ «Հ. Յ. Դաշնակցությունը 1905-1906 թթ. նշված նպատակների համար իր տրամադրության տակ Թիֆլիսում և Ռուսական կայսրության այլ քաղաքներում ստեղծել էր հեղափոխական բյուրո, հատուկ հեղափոխական և տեղական կոմիտեներ, ենթակոմիտեներ, որոնք 1905-1907 թթ. տպագրում էին հակակառավարական ամսագրեր, թերթեր, զինված ապստամբության կոչեր», որի համար Հ. Յ. Դաշնակցությունը, ըստ ամբաստանագրի, ստեղծել էր. «տպարաններ, հրազենային և սառը զենքի մեծ պահեստներ,

[1] ՀԱԱ, ֆ. 150, g. 1, գ. 38, թ. 125:
[2] Նույն տեղում, ֆ. 1457, g. 2, գ. 16, թ. 3:
[3] Նույն տեղում, g. 1, գ. 68ա, թ. 8:
[4] Տե՛ս «Վէմ», յուլիս-սեպտեմբեր, 2011, թիւ 3, էջ 231-233, 238-239, հոկտեմբեր-դեկտեմբեր, 2011, թիւ 4, էջ 184, 186, 188, 193, 195, 197:
[5] Տե՛ս **Ազնաւուրեան Ա.**, Ցարական հալածանքը Հ. Յ. Դաշնակցութեան դէմ, «Հայրենիք» ամսագիր, ապրիլ, 1940, թիւ 6, էջ 114:
[6] ՀԱԱ, ֆ. 1457, g. 3, գ. 1, թ. 493, 496:

հեղափոխական զինվորների հատուկ ջոկատներ, ահաբեկչական ջոկատներ…, որոնց միջոցով 1905-1909 թթ. Ռուսաստանում կատարել է մի շարք սպանություններ կառավարական իշխանության ներկայացուցիչների և անհատների հանդեպ, որոնք վտանգավոր էին նկատվում հանցավոր կազմակերպության (նկատի ունի Հ. Յ. Դաշնակցությանը – Կ. Հ.) համար»[1]: Հարկ է նշել, որ ամբաստանագրում նշված կառույցները ստեղծվել էին ՀՅԴ սկզբնավորումից ի վեր: Դրանց գործունեությունը մինչև 1903 թ. ուղղված էր միայն Օսմանյան կայսրության դեմ: Բայց սկսած 1903 թ., երբ ամբողջ Կովկասում տեղի էին ունենում հակացարական ելույթներ ընդդեմ հայ եկեղեցական գույքի բռնագրավման, այդ մարմինների գործունեության առանցքում դրվեց ցարիզմի դեմ պայքարի հարցը, որն ավելի լայն թափ ստացավ 1905 թ., երբ ՀՅԴ Խորհուրդը ընդունեց «Կովկասյան նախագիծը»:

ՀՅԴ-ն մեղադրվում էր նաև հայ ազգաբնակչությունից ամենամսյա տուրք հավաքելու, մեծահարուստներից հարկադրաբար գումարներ կորզելու, մերժում ստանալու դեպքում՝ նրանց սպանելու, իրեն դատական իշխանության իրավասություն վերապահելու, քրեական և քաղաքացիական գործեր քննելու և հակաօրինական վճիռներ կայացնելու[2], մի շարք ցարական պաշտոնյաների ահաբեկելու[3], ինչպես նաև. «հայ-թաթարական ջարդերը նախաձեռնելու, 1906 թ. օգոստոսին էջմիածնում ցարական չինովնիկների դեմ հակապետական խորհուրդ հրավիրելու մեջ»[4]: Բացի ընդհանուր մեղադրանքից, Կարսի մարզի ՀՅԴ գործիչներից շատերի մեղադրական ակտերում կարմիր գծի նման անցնում էր նաև «Կենտրոնական կոմիտեի անդամ» կամ «ահաբեկիչ մարմնի անդամ» լինելու մեղադրանքը[5]:

Հարցաքննության ընթացքում և մեղադրական եզրակացության մեջ քննիչ Ն. Լիժինը չէր խորշում նաև կեղծիքներից ու զրպարտություններից: Այսպես, օրինակ, Արամայիս Տեր-Դանիելյանը մեղադրվում է այն բանում, որ իբր նա 1905 թ. Ղարաբաղի Նինգի գյուղում մարդկանց կախել է տվել ոտներից և չի ազատել այնքան ժամանակ, մինչև «չի ստացել պահանջուող գումարը իր յանցաւոր նպատակների համար»[6]: Նրան և Դաշնակցական Խեչոյին Ն. Լիժինը մեղադրել է նաև այն բանում, որ նրանք «աշխարհասաստ հանցանք» ծրագրելիս իրար հետ խոսել են ֆրանսերեն, ուստի մատնիչը վերջիններիս չի հասկացել: Դա այն դեպքում, երբ «Խեչօն ֆրանսերէն մինչեւ տասը հազիւ էր հաշւում, իսկ ես զօռով

[1] Նույն տեղում, թ. 493:
[2] Տե՛ս նույն տեղում, թ. 493, 496:
[3] Տե՛ս նույն տեղում, g. 1, գ. 68, թ. 7, տե՛ս նաև **Խոնդկարեան Ա.**, Ցարական Ռուսաստանը եւ կովկասահայութիւնը, «Հայրենիք» ամսագիր, ապրիլ, 1930, թիւ 6, էջ 152, տե՛ս նաև «Վէմ», համահայկական հանդես, հոկտեմբեր-դեկտեմբեր, 2011, թիւ 4, էջ 206-207:
[4] **Ջելոյան Ա. Ռ.**, Ցարիզմի քաղաքականությունը և ՀՅԴ դատական գործը (1908-1912 թթ.), «ԼՀԳ», հունվար-օգոստոս, 2011, թիվ 1-2, էջ 82:
[5] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1457, g. 3, գ. 1, թ. 494, 496, 497:
[6] Նույն տեղում, ֆ. 150, g. 1, գ. 38, թ. 131:

կարդում էի»[1], - իր «Անցած օրեր» անտիպ հուշագրությունում գրում է Ա. Տեր-Դանիելյանը:

Մ. Կասոյանին և Խ. Բզնունուն 6 ամիս բանտում պահելուց հետո ազատ են արձակում, իսկ Հ. Ղարիբյանին ուղարկում են Նովոչերկասկի բանտը: ՀՅԴ ձերբակալված անդամների մեծ մասին 1-1,5 տարի հետո փոխադրում են Թիֆլիսի Մետեխի բանտը: Դաշնակցության մեծ դատավարության թղթածրարը, որը բաղկացած էր մոտ 4.600 էջից, «կառավարութեան կողմից դրուել էր բանտարկեալների տրամադրութեան տակ, - հիշում է Ա. Ազնավուրյանը, - որպէսզի ամէն մեղադրեալ իրեն վերաբերեալ մեղադրանքներին ծանօթանար եւ դատարանի առջեւ պաշտպանուելու հնարաւորութիւնների մասին մտածէր»[2]: Ա. Ազնավուրյանին վեց ամիս Մետեխի բանտում պահելուց հետո փոխադրում են Կարս և առողջության քայքայման պատճառով ազատ արձակում մինչև դատավարությունը: Ժամանակավորապես ազատ են արձակում նաև բիթլիսցի Փանոսին: Օգտվելով դրանից՝ Ա. Ազնավուրյանը Կարս-Սարիղամիշ-Կարաուրգան գծով անցնում է ռուս-թուրքական սահմանը և հաստատվում Ալաշկերտում:

Հարցաքննությունների և դատավարության ժամանակ ՀՅԴ Կարսի գործիչները փորձել են ցարական ոստիկանությանը և դատարանին համոզել, որ 1907 թ. ՀՅԴ IV ընդհանուր ժողովում կուսակիցների մի խումբ առանձնացել է ՀՅԴ-ից ու ստեղծել նոր կուսակցություն, որը ձգտում էր «հաստատել ինքնավար հայկական տերություն» և որ խմբապետ Միհրանի շարժումն ուղղված էր ոչ թե ՀՅԴ-ի, այլ այս նոր կուսակցության դեմ[3]: Ուշագրավ է, որ ՀՅԴ մեծ դատավարությամբ որպես մեղադրյալ անցնող ՀՅԴ Կարսի գործիչները, ընդունելով իրենց ներկայացված մեղադրանքի հիմնական մասը, հրաժարվում էին առանձին կետերից: Այսպես, Ա. Ազնավուրյանը հարցաքննության ժամանակ հերքում է, որ ինքը Հ. Յ. Դաշնակցության համար զենք է փոխադրել, մինչդեռ հայտնի է, որ նա տասնամյակներ շարունակ զենք է փոխադրել ՀՅԴ սահմանամերձ զինապահեստները: Խաչատուր Բզնունին, իր հերթին, ընդհանրապես ժխտում էր ՀՅԴ անդամ լինելու հանգամանքը և որպես իր ասածի ապացույց հավելում, թե իրեն ընտրել են հայ եկեղեցու երեսփոխան, իսկ Հ. Յ. Դաշնակցություն կուսակցությունը եկեղեցուն չի ընդունում»[4]: Նա պնդում էր, որ ինքը հայ բնակչության շրջանում դրամահավաքչություն է կատարել ոչ թե Հ. Յ. Դաշնակցության համար, ինչպես նշված է ամբաստանագրում, այլ որպես «Հայ եկեղեցական դպրոցների տեսչության պարտադիր անդամ», իրականացրել է «ուսումնարանը պահելու համար»[5]:

---

[1] Նույն տեղում:
[2] **Ազնաւուրեան Ա.**, Ցարական հալածանքը Հ. Յ. Դաշնակցութեան դէմ, «Հայրենիք» ամսագիր, ապրիլ, 1940, թիւ 6, էջ 117:
[3] Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1457, g. 3, գ. 1, թ. 496:
[4] Նույն տեղում, թ. 494:
[5] Նույն տեղում:

Մեղադրյալների նման կեցվածքը պայմանավորված էր նրանց պաշտպանության համար մշակված ընդհանուր հայեցակարգով:

1912 թ. մարտի 20-ին տեղի է ունենում դատավարության վերջին նիստը: ՀՅԴ Կարսի գործիչներից Համբարձում Ղարիբյանը դատապարտվում է տաժանակիր աշխատանքի, իսկ Հակոբ Չիլինգարյանը, չդիմանալով բանտի ծանր պայմաններին, 1912 թ.՝ մինչև դատավարությունը, ծանր հիվանդությունից մահանում է Վլադիկավկազի բանտում[1]:

Ուշագրավ է, որ Ալեքսանդրապոլի դաշնակցականների մեծ մասը զերծ է մնում հետապնդումներից ու հալածանքներից շնորհիվ այն բանի, որ ՀՅԴ Քարի կենտրոնական կոմիտեն դեմ էր արտահայտվել «Կովկասյան նախագծին»[2]: Այս փաստը մեկ անգամ ևս ապացուցում է, որ ՀՅԴ-ի հանդեպ ցարական հալածանքները գլխավորապես պայմանավորված էին ՀՅԴ IV ընդհանուր ժողովի կողմից «Կովկասյան նախագծի»՝ որպես ծրագրի, հաստատումով:

1908 թվականից սկսված և մինչև 1911 թ. շարունակվող ձերբակալությունները լուրջ հարված հասցրին ՀՅԴ կովկասյան մարմիններին: Այս փաստն արձանագրվել է նաև ՀՅԴ Արևելյան բյուրոյի Մեծ Հայքի կազմակերպական շրջանների 1910 թ. հոկտեմբերի 2-13-ը Էրզրումում հրավիրված ռայոնական ժողովում, որի 12-րդ նիստի արձանագրության մեջ կարդում ենք. «Ձրաբերդի, ինչպէս նաեւ մնացած համարեա բոլոր վայրերու մէջ ալ գոյութիւն չունին լուրջ կազմակերպութիւններ …Ընդհանրապէս կարելի է ըսել, որ կեանքը մեռած է, դրութիւնն՝ անմխիթարական: Հատուկտոր ընկերներ կան համարեա ամէն տեղ, բայց անոնք ցրուած են այս ու այն կողմ (խոսքը ՀՅԴ կովկասյան կառույցների մասին է Կ. Հ.), եւ անհրաժեշտ է կարող ու հեղինակաւոր ձեռք մը, որ կարողանայ միացնել, ի մի հաւաքել ցրուած ուժերը եւ իրար հետ կապել զանոնք»[3]: Իսկ ՀՅԴ VI ընդհանուր ժողովում (1911 թ. օգոստոս-սեպտեմբեր, Կ. Պոլիս) Սիմոն Վրացյանի (Գրուզինյան) ներկայացրած մի տեղեկագրում Կարսի մարզի ՀՅԴ կառույցների մասին կարդում ենք. «Բոլորովին քայքայուած է, ոչ քաղաքում, ոչ էլ գիւղերում՝ ոչինչ չկայ»[4]:

Այսպիսով, Հ. Յ. Դաշնակցության մեծ դատավարությունը փակեց Կարսի մարզում ՀՅԴ կազմակերպությունների գործունեության պատմությունը: Առջևում Առաջին համաշխարհային պատերազմն էր, որն իր հետ բերելու էր պատմության մեջ իր նախադեպը չունեցող հայոց ցեղասպանությունը Օսմանյան կայսրությունում, որի

[1] Տե՛ս «Վէմ», յուլիս-սեպտեմբեր, 2011, թիւ 3, էջ 231, հոկտեմբեր-դեկտեմբեր, 2011, թիւ 4, էջ 209:
[2] Տե՛ս **Սիմոնյան Հր.**, Ազատագրական պայքարի ուղիներում, գիրք IV, Երևան, 2010, էջ 297:
[3] Նիւթեր…, Ը. հատ., խմբ. եր. Փամպուքեանի, Պէյրութ, 2011, էջ 170:
[4] Նույն տեղում, Թ. հատ., խմբ. եր. Փամպուքեանի, Պէյրութ, 2012, էջ 192:

ընթացքում թուրքական յաթաղանից փրկված արևմտահայ բեկորների համար Կարսի մարզը դառնալու էր փրկության խարիսխներից մեկը:

Ամփոփելով Կարսի մարզի ՀՅԴ կառույցների 1904-1912 թթ. գործունեությունը, գալիս ենք հետևյալ եզրահանգումների՝ 1. 1904 թ. վերջերից ՀՅԴ «Ձրաբերդ» կենտրոնական կոմիտեի դատաստանական գործերում ներգրավվելու, անգործության և թուլության հետևանքով Կարսի մարզում հեղափոխական գործը հետընթաց է ապրում: Դրա հետևանքով ծայր են առնում ապօրինի գործող խմբերի կողմից տեղական բնակչության նկատմամբ իրականացված հարստահարություններ և բռնություններ, արձանագրվում են ՀՅԴ կառույցների հանդեպ ժողովրդի անվստահության, հեղափոխական գործի անտեսման, զենքի ու զինամթերքի պակասորդի, կուսակցական գումարների յուրացման և նմանատիպ այլ դեպքեր: 2. 1905-1906 թթ., շնորհիվ երկու կողմերից իրականացված խաղաղասիրական քայլերի, Կարսի մարզում հայ-թաթարական բախումներ չեն արձանագրվում, իսկ հայ բնակչության պաշտպանության համար կազմավորվում են թռուցիկ խմբեր: 3. 1905-1908 թթ. աննախընթաց հաջողություն է գրանցվում Երկիր զենքի փոխադրման գործում, ինչի շնորհիվ հաջողվում է մեծ քանակությամբ զենք ու զինամթերք փոխադրել Վան-Վասպուրական, մասամբ էլ՝ Սասուն: 4. 1905-1908 թթ. Կարսի մարզում մեծ իրարանցում է առաջ բերում ՀՅԴ Խորհրդի կողմից ընդունված և IV ընդհանուր ժողովում վավերացված «Կովկասյան նախագիծը», որը արևմտահայերի շրջանում դիտվում է որպես արևմտահայ ազատագրական պայքարից հրաժարվելու ծրագիր: 5. 1905 թ. վերջին ընտրված ՀՅԴ Կարսի նորակազմ կենտրոնական կոմիտեի կողմից ՀՅԴ Արևելյան բյուրոյին ուղղված օգնության խնդրանքները պատշաճ ուշադրության չեն արժանանում, ինչի արդյունքում մարզում ավելի են խորանում անցանկալի երևույթները: Դրանց նպաստում են նաև ցարական իշխանությունների՝ 1908-1911 թթ. իրականացրած մարզի ՀՅԴ գործիչների ձերբակալությունները և ՀՅԴ մեծ դատավարությունը: Այդ ամենի հետևանքով Կարսի մարզի ՀՅԴ կառույցները քայքայվում են, ինչն իր պաշտոնական արձանագրումն է գտնում ՀՅԴ Արևելյան բյուրոյի Մեծ Հայքի կազմակերպական շրջանների 1910 թ. հոկտեմբերի 2-13-ը Էրզրումում կայացած ռայոնական ժողովում:

***

Карапет Акопян, Деятельность Карсского Центрального комитета „Джраберд" АРФ дашнакцутян в 1904-1912 гг., - В годы, последовавшие подъему структур АРФ дашнакцутян Карса в 1902-1904 гг., в регионе Карса начались случаи эксплуатации, угнетения и насилия, нехватки оружия и боеприпасов, другие аналогичные ситуации, которые привели к резкому ослаблению структур АРФ дашнакцутян в регионе Карса. Попытки исправления ситуации, предпринятые в 1906-1908 гг.

центральным комитетом АРФ дашнакцутян Карса, никаких результатов не принесли. Тем не менее, когда в 1905-1906 гг. по всему Кавказу происходили армяно-татарские столкновения, в регионе Карса такие случаи не встречаются, а в 1905-1908 гг.был зафиксирован беспрецедентный успех в плане переправления оружия в Западную Армению. “Кавказский проект”, принятый в 1905 г. Советом АРФ дашнакцутян и ратифицированный на IV общем собрании АРФ дашнакцутян, послужил поводом, чтобы царские власти в 1908-1912 гг. произвели ряд арестов, направленных против Кавказских органов и деятелей АРФ дашнакцутян, в результате чего окончательно развалились революционные структуры в регионе Карса.

***

Karapet Hakobian, The concerning ARF of Khars central committees of „Jraberd" in 1904 - 1912, - ARF constitution of Khars in 1902-1904 the rise subsequent from number cases of appression, violence and violation, shortage of armaments and other cases of the same kind arose in Khars Region which resulted in sharp weakening of the ARF structures in the region of Khars. The steps taken by the ARF Central Committee of Khars to settle the situation didnit yield ary results. However, when armenian-tatar conflicts were seen in all the Caucasus in 1905-1906, no cases of the same kind were registeud in the region of Khars, but in 1905-1908 an unprecedented success was registeud in the sense of transferring armaments to the West Armenia. The „Caucasian Bill” passed by the ARF Council and certified by the ARF IV general meeting, caused the tsarist government to carry out a number of arrests against the ARF Caucasian bodies and statesmen in 1908-1912, because of which the revolutionary structures of Khars Region were corrupted once and for all.